ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/66

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.03.2020թ. թիվ 26/26-1/4676-2020 գրությամբ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 26.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/976-2020 գրության հիման վրա, 27.03.2020թ. թիվ 26/26-1/4676-2020 գրությամբ նախաձեռնել է «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ֆարմեգուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ֆարմեգուս» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 14.04.2020թ. ուղղված գրությամբ հայտնել է, որ 2019թ. ապրիլի 16-ին «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի և ՀՀ

պաշտպանության նախարարության միջև կնքվել է բժշկական ապրանքների մատակարարման ԷԱՃԱՊՁԲ-9/13-3 ծածկագրով պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր):

Ընկերությունը հայտնել է, որ Պայմանագրի հիման վրա պետք է 2019 թվականի երկրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում ՀՀ ՊՆ-ին մատակարարեր «Հեմակոն արյան և պլազմայի պաշարման և պահպանման համար երկպարկ «TODOSCAN» ապրանքատեսակը՝ թվով 4000 հատ ընդհանուր քանակով:

Ընկերությունը վկայակոչել է, որ.

Պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (հետայսու նաև՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7. կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ. Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Ընկերությունը նշել է, որ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին ուղղված 23.03.2020թ. թիվ ԴՎԱ/1045 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը նշված պայմանագիրը միակողմանի մասնակի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետը և 6.2 կետի պահանջները:

Այնուհետև, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությամբ ներկայացրել է «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Ընկերությունը վկայակոչել է հետևյալ իրավական հիմքերն և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ընկերությունը հայտնել է, որ Պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 20.03.2020թ. միակողմանի մասնակի լուծվել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը և 6.2 կետի պահանջները, ըստ որի Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Ընկերությունը հայտնել է, որ «Ֆարմեգուս» ՍՊԸ–ի կողմից ԷԱՃԱՊՁԲ-9/13-3 ծածկագրով պայմանագրի շրջանակներում արդեն իսկ կատարվել էր պայմանագրով նախատեսված մատակարարումների կեսից ավելին, իսկ մնացած 1680 հատի պատվերն արդեն իսկ տրվել էր արտադրողին, և այն գտնվում էր ճանապարհին, և եթե չլիներ Չինաստանում, Հայաստանում և գրեթե ողջ աշխարհում տիրող ֆորս մաժորային իրավիճակը, ապրանքների մնացած մասը տեղում կլիներ նույնիսկ պայմանագրով սահմնված ժամկետից էլ շուտ:

Ընկերությունը հայտնել է, որ դեռևս 09.12.2019թ. ՀՀ պաշտպանության նախարարությանը ներկայացրել էր գրություն, որով մասնավորապես հայտնել էր հետևյալը. «Ֆարմեգուս» ԱՊԸ-ն 16.04.2019թ. կնքված ԷԱՃԱՊՁԲ-9/13-3 ծածկագրով պայմանագրի հիման վրա պետք է 2019 թվականի երկրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում ՀՀ ՊՆ-ին մատակարարեր «Հեմակոն արյան և պլազմայի պաշարման և պահպանման համար երկպարկ TODOSCAN»» ապրանքատեսակը՝ թվով 4000 հատ ընդհանուր քանակով:

Ներկա պահին, համաձայն ժամանակացույցի, վերը նշված ապրանքից դեռևս մատակարարվել է երկրորդ եռամսյակի համար նախատեսված քանակից թվով 2000 հատ և չորրորդ եռամսյակի համար նախատեսված քանակից թվով 320 հատ:

Տեղեկացնելով, որ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի կողմից վերը նշված ապրանքի՝ չորրոդ եռամսյակի համար նախատեսված մյուս խմբաքանակը՝ թվով 1680 հատ, Ընկերության կողմից Չինաստանում պատվիրվել է դեռնս օգոստոսի 15-ին՝ վստահ լինելով, որ պայմանագրով նախատեսված ժամկետներում կկարողանա իրականացնել մատակարարումը:

Սակայն CMA CGM ծովային բեռնափոխադրող ընկերության անկանխատեսելի գործելաոճը՝ նախապես ծովային երթուղուց շեղվելը, Ընկերությանը շատ անսպասելի կերպով կանգնեցրել է փակուղու առջև:

Համաձայն CMA CGM ծովային բեռնափոխադրող ընկերության նախապես ազդարարած ծովային երթուղու՝ նավը պետք էր Փոթիի նավահանգիստ ժամաներ նույն թվականի դեկտեմբերի 1-ին: Սակայն, Ընկերության համար դեռևս անհայտ պատճառներով, նավահանգիստը լքելուց հետո անսպասելի փոփոխություն է կատարվել նավի նախապես ազդարարած ծովային երթուղու մեջ, որի հետևանքով մոտ 20 օր երկարաձգվել է դեպի Փոթիի նավահանգիստ ժամանման պահը: Մասնավորպես՝ նավի ծովային երթուղու մեջ ընդգրկվել է Սինգապուրը, որը CMA CGM ծովային բեռնափոխադրող ընկերության բազայի սկզբնական երթուղու մեջ նախապես ներառված չի եղել:

Հաշվի առնելով, որ Ընկերության կողմից Չինաստանում ձեռք բերված ապրանքը՝ թվով 1680 հատ «Հեմակոն արյան և պլազմայի պաշարման և պահպանման համար երկպարկ TODOSCAN», դեռևս գտնվում է ճանապարհին, և որ այն Երևան կհասնի միայն դեկտեմբերի վերջի շաբաթվա ընթացքում, խնդրել է կատարել 100% կանխավճար՝ չորրորդ եռամսյակի համար նախատեսված 1.997.520 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով ապրանքատեսակի համար և մատակարարման ժամկետը երկարաձգել մինչև ներառյալ 2020 թվականի հունվար ամիս:

Ընկերությունը պատրաստ է ներկայացնել բանկային երաշխիք նշված գումարի 100%-ի չափով, նաև վճարել ապրանքի ուշացման համար պայմանագրով նախատեսված տույժերն ու տուգանքները:

Միևնույն ժամանակ գրությանը կցվել էին նաև բավարար ապացույցներ, որոնք վկայում էին, որ ապրանքները բարձվել են կոնտեյներ, որ օրը և ժամին, որտեղից է դուրս եկել և ուր է գնում, որտեղ է կանգ առել և ինչի համար .....»:

Ընկերությունը հայտնել է, որ մինչ օրս վերը նշված գրությանն այդպես էլ ՀՀ պաշտպանության նախարարությունը չի պատասխանել, և, եթե հաշվի առնվի, որ վերը նված ապրանքները ՀՀ-ում էին արդեն հունվար ամսին, իսկ ՀՀ պաշտպանության նախարարությունը Ընկերության կողմից ներկայացված գրությանն այդպես էլ չպատասխանելով լուծել է Պայմանագիրը 20.03.2020թ., ստացվում է, որ երկարաձգելով Պայմանագիրը մինչև 2020թ. հունվար՝ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն կմատակարարեր նաև մնացած 1680 հատը:

Ընկերությունը հայտնել է, որ վերը նված ապրանքները ՀՀ-ում էին արդեն 2020թ. հունվար ամսին, ինչը վկայում են մաքսազերծման փաստաթղթերը, մինչդեռ՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի: Հաշվի առնելով, որ տվյալ պայմանագրով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ էր սահմանված 4-րդ եռամսյակի վերջը՝ 30.12.2019թ., և նշված ապրանքը արդեն Հայաստանում էր 2020թ. հունվարի 15-ին, իսկ պատվիրատուն իրավունք ուներ միակողմանի լուծել պայմանագիրը, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի, ապա նման պայմաններում ՀՀ ՊՆ իրավունք չուներ չարձագանքել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի առաջարկին՝ մատակարարման ժամկետը 2020թ. հունվար տեղափոխելու վերաբերյալ, առավել ևս, որ ողջ հունվար ամսին ՍՊԸ-ի կողմից ապրանքը մատակարարվելու դեպքում պատվիրատուն չէր կարողանա լուծել նշված պայմանագիրը՝ հաշվի առնելով պայմանագրով սահմանված 30 օրից ավել ուշացման ժամկետի իմպերատիվ պահանջը:

Ընկերությունը հայտնել է, որ, հաշվի առնելով, որ նշված չմատակարարված ապրանքի մասը արդեն իսկ 2020թ. հունվարին գտնվում էր ՀՀ-ում, Պատվիրատուի կողմից ՍՊԸ-ի գրությանը դրական պատասխան տալու դեպքում «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն 2020թ. հունվարի ընթացքում կմատակարարեր վերոհիշյալ ապրանքատեսակը և այսօր չէր կանգնի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Ընկերությունը նշել է, որ արդյունքում՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից թույլ տրված անգործության հետևանքով «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն հայտնվել է գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ընկերությունը նշել է, որ թիվ ՍՑ-ՆԳ-2020/66 ընթացակարգը նախաձեռնվել է 30.03.2020թ.՝ հիմքում դրվելով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2020թ. պայմանագրի միակողմանի մասնակի լուծումը, ըստ որի՝ Ընկերության հայտը մերժվել է 20.03.2020թ., մինչդեռ՝ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերն ի հայտ են եկել դեռևս 2019թ., քանի որ չորրորդ եռամսյակի մատակարարման վերջնաժամկետ էր սահմանվել 2019թ. դեկտեմբերի 29-ը /ապրանքի մատակարարման 30-օրյա ուշացման ժամկետը հաշվի առնելով/ և հետևաբար պայմանագիրը պետք է լուծվեր և հիմքերը պետք է ներկայացվեին լիազոր մարմին առնվազն 2020թ. հունվարի սկզբին:

Ընկերությունը նշվել է, որ միայն 3 ամիս անց է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում կայացրել Ընկերության տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Մինչդեռ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում՝ Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Ընկերությունը շեշտել է, որ հատկանշական է նաև այն փաստը, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել են նույնաբովանդակ բազմաթիվ ընթացակարգեր /ՍՑ-ՆԳ-2019/195 և ՍՑ-ԼՕ-2019/233/, օրինակ ՍՑ-ԼՕ-2019/233 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.11.2019թ.–ին թիվ ՊՆ/02/2630-2019 գրությամբ: Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 18.11.2019թ.–ին՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի 12.11.2019թ.–ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 26.11.2019թ.–ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ

սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից ….:

Այսպիսով՝ վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.–ի թիվ 26/26-1/19878-2019 գրությամբ «Պոժմաստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգը մերժել»:

Ընկերությունը խնդրել է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը լուծել է ոչ թե 16.04.2019թ. կնքված Պայմանագիրը, այլ դրա հիման վրա 13.06.2019թ. կնքած համաձայնագիրը: Վերը նշված հանգամանքը փաստվում է նաև տեղեկագրում հրապարակված տեղեկատվությամբ՝

Հայտարարություն ՀՀ պաշտպանության նախարարության և «Ֆարմեգուս» ՍՊԸ միջև 16.04.2019թ. կնքված ԷԱՃԱՊՁԲ-9/13-3 գնման պայմանագրին կից 13.06.2019թ. կնքված N1 համաձայնագիրը միակողմանի մասնակի լուծման վերաբերյալ /Շտկված վերնագրով/:

Ընկերությունը նշել է, որ համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ընկերությունը հայտնել է, որ Համաձայնագրի լուծման պարագայում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը

չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ընկերությունը շեշտել է, որ հատկանշական է նաև, որ վերը նշված հիմնավորմամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից նույնաբովանդակ ընթացակարգը մերժվել է /ՍՑ-ՆԳ-2020/61/, և «Գրիլայթ» ՍՊԸ-ն չի ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը հայտնել է, որ արդյունքում՝ Ընկերության հայտը մերժելը նաև ոչ իրավաչափորեն հանգեցրել է «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Ֆարմեգուս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/66 ընթացակարգի շրջանակներում 02.04.2020թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/976-2020 գրությամբ հայտնել է, որ, հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի միջև կնքված գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը միակողմանի մասնակի լուծել է «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի հետ 16.04.2019թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-9/13-3 գնման պայմանագրին կից 13.06.2019թ. կնքված N 1 համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեկացնելով, որ վերոնշյալ պայմանագրի և համաձայնագրի լուծման վերաբերյալ գրությունը 23.03.2020թ. ուղարկվել է Ընկերության պաշտոնական

էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/66 ընթացակարգի շրջանակներում 02.04.2020թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/66 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/66 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի միջև 16.04.2019թ. կնքվել է ԷԱՃԱՊՁԲ-9/13-3 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 13.06.2019թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որին կից հավելվածով՝ գնման ժամանակացույցով, 4000 հատ «Հեմակոն արյան և պլազմայի պաշարման և պահպանման համար երկպարկ TODOSCAN» ապրանքատեսակի մատակարարման ժամկետ է սահմանվել 2019թ. ըստ եռամսյակների՝ 2-րդ եռամսյակ՝ 2000 հատ և 4-րդ եռամսյակ՝ ոչ ուշ, քան 29.11.2019թ.՝ 2000 հատ:

3. «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին ուղղված 23.03.2020թ. թիվ ԴՎԱ/1045 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի միջև 16.04.2019թ. կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ-9/13-3 պայմանագրի և դրա հիման վրա 13.06.2019թ. կնքված N 1 համաձայնագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2019թ. մատակարարել 4000 հատ «Հեմակոն արյան և պլազմայի պաշարման և պահպանման համար երկպարկ TODOSCAN», որից չի մատակարարվել 1680 հատը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.03.2020թ. միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և համաձայնագիրը:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 23.03.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը և համաձայնագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.03.2020թ. թիվ 26/26-1/4676-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 26.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/976-2020 գրությունը և կից փաստաթղթերը, «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի 14.04.2020թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի միջև 16.04.2019թ. կնքվել է ԷԱՃԱՊՁԲ-9/13-3 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 13.06.2019թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որին կից հավելվածով՝ գնման ժամանակացույցով, 4000 հատ «Հեմակոն արյան և պլազմայի պաշարման և պահպանման համար երկպարկ TODOSCAN» ապրանքատեսակի մատակարարման ժամկետ է սահմանվել 2019թ.-ին՝ ըստ եռամսյակների՝ 2-րդ եռամսյակ՝ 2000 հատ և 4-րդ եռամսյակ՝ ոչ ուշ, քան 29.11.2019թ.՝ 2000 հատ:

«Ֆարմեգուս» ՍՊԸ-ին ուղղված 23.03.2020թ. թիվ ԴՎԱ/1045 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի միջև 16.04.2019թ. կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ-9/13-3 պայմանագրի և դրա հիման վրա 13.06.2019թ. կնքված N 1 համաձայնագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2019թ. մատակարարել 4000 հատ «Հեմակոն արյան և պլազմայի պաշարման և պահպանման համար երկպարկ TODOSCAN», որից չի մատակարարվել 1680 հատը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.03.2020թ. միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը և համաձայնագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Այսպիսով՝ Ընկերությունը, Պայմանագրի համաձայն, պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել 4000 հատ «Հեմակոն արյան և պլազմայի պաշարման և պահպանման համար երկպարկ TODOSCAN» ապրանքատեսակը 2019թ.՝ ըստ եռամսյակների՝ 2-րդ եռամսյակ՝ 2000 հատ և 4-րդ եռամսյակ՝ ոչ ուշ, քան 29.11.2019թ.՝ 2000 հատ, որից, ըստ գործում առկա նյութերի, չի մատակարարել 1680 հատը:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 23.03.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը և համաձայնագիրը միակողմանի

լուծելու մասին ծանուցումը:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն գրությամբ (ՀՀ պաշտպանության նախարարության մուտք 09.12.2019թ.) դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը և հայտնել հետևյալը.

««Ֆարմեգուս» ՍՊԸ-ն 16.04.2019թ. կնքված ԷԱՃԱՊՁԲ-9/13-3 ծածկագրով պայմանագրի հիման վրա պետք է 2019 թվականի երկրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում ՀՀ ՊՆ-ին մատակարարեր «Հեմակոն արյան և պլազմայի պաշարման և պահպանման համար երկպարկ TODOSCAN»» ապրանքատեսակը՝ թվով 4000 հատ ընդհանուր քանակով:

Ներկա պահին, համաձայն ժամանակացույցի, վերը նշված ապրանքից դեռևս մատակարարվել է երկրորդ եռամսյակի համար նախատեսված քանակից թվով 2000 հատ և չորրորդ եռամսյակի համար նախատեսված քանակից թվով 320 հատ:

Տեղեկացնելով, որ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի կողմից վերը նշված ապրանքի՝ չորրոդ եռամսյակի համար նախատեսված մյուս խմբաքանակը՝ թվով 1680 հատ, Ընկերության կողմից Չինաստանում պատվիրվել է դեռևս օգոստոսի 15-ին՝ վստահ լինելով, որ պայմանագրով նախատեսված ժամկետներում կկարողանա իրականացնել մատակարարումը:

Սակայն CMA CGM ծովային բեռնափոխադրող ընկերության անկանխատեսելի գործելաոճը՝ նախապես ծովային երթուղուց շեղվելը, Ընկերությանը շատ անսպասելի կերպով կանգնեցրել է փակուղու առջև:

Համաձայն CMA CGM ծովային բեռնափոխադրող ընկերության նախապես ազդարարած ծովային երթուղու՝ նավը պետք էր Փոթիի նավահանգիստ ժամաներ նույն թվականի դեկտեմբերի 1-ին: Սակայն, Ընկերության համար դեռևս անհայտ պատճառներով, նավահանգիստը լքելուց հետո անսպասելի փոփոխություն է կատարվել նավի նախապես ազդարարված ծովային երթուղու մեջ, որի հետևանքով մոտ 20 օր երկարաձգվել է դեպի Փոթիի նավահանգիստ ժամանման պահը: Մասնավորպես՝ նավի ծովային երթուղու մեջ ընդգրկվել է Սինգապուրը, որը CMA CGM ծովային բեռնափոխադրող ընկերության բազայի սկզբնական երթուղու մեջ նախապես ներառված չի եղել:

Հաշվի առնելով, որ Ընկերության կողմից Չինաստանում ձեռք բերված ապրանքը՝ թվով 1680 հատ «Հեմակոն արյան և պլազմայի պաշարման և պահպանման համար

երկպարկ TODOSCAN», դեռևս գտնվում է ճանապարհին, և, որ այն Երևան կհասնի միայն դեկտեմբերի վերջի շաբաթվա ընթացքում, խնդրել է կատարել 100% վանխավճար՝ չորրորդ եռամսյակի համար նախատեսված 1.997.520 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով ապրանքատեսակի համար և մատակարարման ժամկետը երկարաձգել մինչև ներառյալ 2020 թվականի հունվար ամիս:

Ընկերությունը պատրաստ է ներկայացնել բանկային երաշխիք նշված գումարի 100%-ի չափով, նաև վճարել ապրանքի ուշացման համար պայմանագրով նախատեսված տույժերն ու տուգանքները»:

Ընկերությունը վերը նշված գրությանը կից ՀՀ պաշտպանության նախարարությանը ներկայացրել է հետևյալ փաստաթղթերը՝

1. DHL-ի Չինաստանի գործընկերոջ՝ Sumisho Global Logistics (China) Co Ltd ընկերության կողմից տրված ապրանքների ստացման բեռնագիրը՝ 1 թերթ:
2. DHL ընկերության կողմից հոկտեմբերի 29-ին Ընկերությանը տրամադրված տեղեկատվությունը բեռի շարժի վերաբերյալ՝ 1 թերթ:
3. CMA CGM ծովային բեռնափոխադրող ընկերության նավի երթուղին ըստ տարբեր օրերի՝ համաձայն իրենց տեղեկատվական բազայի՝ 2 թերթ:
4. DHL ընկերության կողմից տրամադրված տեղեկանքը՝ 1 թերթ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ մինչ օրս վերը նշված գրությանն այդպես էլ ՀՀ պաշտպանության նախարարությունը չի պատասխանել, և, եթե հաշվի առնվի, որ վերը նշված ապրանքները ՀՀ-ում էին արդեն հունվար ամսին, ինչը վկայում են մաքսազերծման փաստաթղթերը, իսկ ՀՀ պաշտպանության նախարարությունը, Ընկերության կողմից ներկայացված գրությանն այդպես էլ չպատասխանելով, լուծել է Պայմանագիրը 20.03.2020թ., ստացվում է, որ, երկարաձգելով Պայմանագիրը մինչև 2020թ. հունվար, «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն կմատակարարեր նաև մնացած 1680 հատը:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը իր և «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի միջև 16.04.2019թ. կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ-9/13-3 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծել է 20.03.2020թ Ընկերության կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով:

Հաշվի առնելով Ընկերության կողմից ներկայացված փաստական հանգամանքները և դրանք համադրելով Պատվիրատուի Պայմանագրի լուծմանն ուղղված գործողությունների և ժամկետների հետ, գտնում, որ տվյալ դեպքում Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման վերջնաժամկետից շուրջ 4 ամիս հետո Պայմանագրի լուծելու պայմաններում Ընկերությունն ըստ էության տեղեկացված չի եղել Պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարելու հնարավորության մասին:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերը, գտնում եմ, որ Ընկերության վարքագիծը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը նման պայմաններում օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտականությունները մինչև Պայմանագրի միակողմանի լուծելը կատարելուց:

Ինչ վերաբերում է գրությամբ Ընկերության կողմից վկայակոչված այն հանգամանքին, որ Համաձայնագրի լուծման պարագայում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն, և որ հատկանշական է նաև, որ նշված հիմնավորմամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից նույնաբովանդակ ընթացակարգը մերժվել է /ՍՑ-ՆԳ-2020/61/, և «Գրիլայթ» ՍՊԸ-ն չի ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ապա սույն մասով հարկ եմ համարում նշել, որ, ի տարբերություն ՍՑ-ՆԳ-2020/61 որոշմամբ կայացված հիմքի, որի դեպքում Պատվիրատուն «Գրիլայթ» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ միակողմանի մասնակի լուծել էր Համաձայնագիրը, որի վերաբերյալ ծանուցումը 18.03.2020թ. հրապարակել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում, արձանագրում եմ, որ սույն գործով Պատվիրատուի կողմից 23.03.2020թ. տեղեկագրում հրապարակվել է Պայմանագիրը և համաձայնագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը, ուստի նման դիտարկումը հիմնավոր չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.03.2020թ. թիվ 26/26-1/4676-2020 գրությամբ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**